

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱՅ

ՅՈՒԲԵԼԵԱՆՆԻ ԱՌԹԻԻ

1912 թվականին լրացաւ հայ տպագրութեան 400-ամեակը. նշանակում է, ամբողջ 4 դար է, ինչ հայ ժողովուրդը ունեցել է տպագրած գրքեր, թերթեր, որով և մասնակցել է կուլտուրական այն մեծ աշխատանքին, որը գործ են դրել ուրիշ աւելի ու աւելի կուլտուրական մեծ ու փոքր ազգեր:

Չորս հարիւր տարի...

Սա անշուշտ մի արհամարհելի թիւ չէ՝ մանաւանդ մեզ նման մի ժողովրդի համար, որ զուրկ քաղաքական տւեալներէից, ապրել ենք ուժեղների մտրակների տակ:

Անշուշտ պակաս հետաքրքրական չէ մի ակնարկ գրցել մեր պատմական անցեալի վրայ գրական և հասարակական տեսակէտից, որպէսզի հնարաւոր լինի ներկայիս մասին մի որոշ եզրակացութեան յանգելու:

Չուզելով կանգ առնել պատմական այն շրջանի վրայ, երբ հայ ժողովուրդը չի ունեցել իր սեփական տառերը և հետևաբար էլ իր մայրենի գրականութիւնը, մենք, սակայն, պարտք ենք համարում մի փոքրիկ ակնարկ գցել V դարու վերածնութեան շրջանի վրայ, որ ժամանակից հայ ժողովուրդը մուտք գործեց կուլտուրային աշխարհը:

Հայ ժողովրդի վերածնունդի այդ շրջանի հիմնական դէմքերից մէկն է եղել Մեսրոպ Մաշտոցը, որ, տարիների քրտնաջան աշխատանքից յետոյ, հնարել ու ձևակերպել է հայ տառերը:

Հայ պատմիչները և մինչև իսկ նորագոյն գրողներից շատերը հայ տառերի գիւտին տւել են ու տալիս են զուտ կրօնական բնոյթ, սակայն, մենք հեռու ենք այդ մտքից, և, ընդհակառակն, կարծում ենք, որ հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական պայմանները այնքան էին հասունացել, որ այլևս անհնար էր գոյութեան ահեղ կուռում տեղ բռնել առանց մայրենի լեզւի և մայրենի գրականութեան:

Հայ ժողովրդի քաղաքական, ապա և տնտեսական պայմանները, ուրեմն, այնպիսի լուսաւորութիւն էին ստացել, որ ստիպողական պահանջ էր ունենալ սեփական տառեր և զարգացնել մայրենի գրականութիւնը:

Ինչպէս յայտնի է, IV և V դարերում մանաւանդ, հայ ժողովրդի քաղաքական անզօրութիւնն ու սրա հետեանք արտաքին ազգեցութիւնների ուժեղացումը հայկական պետութեան վարիչների վրայ, սպառնում էին թէ նրա ինչպէս քաղաքական ազատութիւններին, նոյնպէս և ազգային գոյութեանը:

Ու այսպիսի երեւումն պայմաններում հայ ժողովուրդը, մասնաւորապէս նրա սուլար մեծամասնութիւն կազմող գիւղացիութիւնը, ինչ կասկած, որ հալւում ու մաշւում էր անտանելի հարկերի ու տուրքերի տակ, որոնք դրւում էին թէ իր պետական վարիչների և թէ օտար ազգեցիկ պետութիւնների կողմից:

Այլասեռումը վերէն վար կատարեալ էր դառնում: Հայ ազնւականութիւնը երկպառակւած, երկու մեծ հոսանքներով էր առաջնորդւում—յունական և պարսկական. հայ թագաւորները անզօր էին կենտրոնացնել իրենց ձեռքին Հայաստանի քաղաքական իշխանութիւնը և շարունակ խաղալիք դառել այս կամ այն ուժեղի ձեռքին, իսկ հասարակ, աշխատաւոր ժողովուրդը, անշուշտ բոլոր վերոյշեալների կողմից չարաչար շահագործւում էր:

Իրանց այս վիճակում, լքումի այդպիսի արտակարգ պարագաներում, մի արտակարգ յուսատու աստղ կարող

է միայն փրկարար նեցուկ լինել: Ու այդպիսի արտակարգ ոյժեր ու աստղեր կը ծնեն միայն այն ժողովուրդները, որոնք զեռ ևս կատարեալ գիմորալիզացիայի չեն ենթարկուած և կամ որոնց պայմանները այնքան են հասունացած, որ ծնում, արտադրում են այդպիսի փրկարար տւեալներ:

Հայ տառերը ահա ներկայանում են այդ ժամանակ այդ լուսատու աստղը, ջահը, և որի համար Մեսրոպ Մաշտոցն ու այն ժամանակի բոլոր այն մարդիկ, որոնք գիտակցում էին հայ ժողովուրդին սպասող աւելի ու աւելի մեծ վտանգը, չը խնայեցին որևէ ջանք, ստեղծելու մի նոր կուսան հայ ժողովրդի համար:

Եւ ի՞նչ բան կարող էր լինել ինքնապաշտպանութեան լաւագոյն կուսանը՝ քան գիրն ու գրականութիւնը՝ մայրենի լեզուով, որ իր հետ բերում էր գոյութեան կուրի գիտակցութիւնը:

Ու հայ ժողովրդի կեանքի հրամայական պահանջները ստեղծեցին այդ անհրաժեշտ տւեալը, և այն ժամանակի հայ մտաւորականութիւնը, թէև լքուած քաղաքական ասպարիզում, ինքն իրան նւիրեց մայրենի գրականութեան արագ զարգացմանը:

Ստեղծեց Ոսկեդարը: Հայ ժողովուրդն ունեցաւ իր ազգային գրականութիւնը, որը կարճ ժամանակի ընթացքում հասաւ իր զարգացման որոշ կէտին:

Հայ գրականութիւնը, սակայն, իր ծնւած օրից, հակառակ այն բանի, որ նա ժողովրդական պահանջի արգասիք էր, դառաւ հայ հոգևորական դասակարգի մոնոպոլիան: Հայ տառերի գիւտից յետոյ, մօտ 8—9 դար հայ գիրն ու գրականութիւնը չը ժողովրդականացաւ, նա լայն ծաւալով մուտք չը գործեց ժողովրդական բոլոր խաւերի մէջ, շնորհիւ այն հանգամանքի, որ հայ մտքի արտադրութիւնները չափազանց քիչ օրինակներ էին գրւում և եղածներն էլ թանկագին էին, քանի որ լւրաքանչիւր օ-

ըինակի արտագրութեան վրայ շարաթներ ու ամիսներ էին գործ դրուում:

Եւ անա այս էական հանգամանքն է, որ խորապէս ազդում է հայ գրականութեան զարգացման ու տարածման վրայ և նա V դարուց յետոյ, դարեր շարունակ մընում է ամուլ և կաշկանդւած:

Պիտի շեշտենք և այն հանգամանքը, որ հայ գրական լեզուն էլ հետզհետէ անմատչելի էր դառնում հայ ժողովրդին, մնալով հասկանալի միմիայն ու բացառապէս հոգևոր և ազնւական դասակարգերի համար:

Այս էր հայ գրականութեան պատկերը մինչև 16-րդ դարը, այսինքն մինչ այն ժամանակ, երբ Գուտտենբերգեան համաշխարհային և հռչակաւոր տպագրութեան գիւտի անմիջական ազդեցութեան տակ, հայ միտքը—գիտցաւ ընդառաջել ժամանակի ոգուն ու հրամայական պահանջին և 1512 թ. առաջին անգամ լոյս ընծայեց տպագրւած առաջին հայերէն գիրքը՝ Պարզատումարը:

Այդ օրւանից, անա, հայ ժողովուրդը ոտք կոխեց վերածնութեան երկրորդ շրջանը, քանի որ հայ տպագրութիւնը դալու էր շատ շուտով փոխելու մինչ այդ անշարժութեան ու քարացած վիճակի մասնւած հայ միտքն ու մտածելակերպը և աւելի ու աւելի զարկ տալու հայ ժողովրդի կենսունակութեանը և կեանքի կուում գիտակցաբար առաջ ընթանալուն:

Եւ իրօք, այնուհետև մեր աչքի առաջ ներկայանում է մի մեղաւջան աշխատանք, որ ուժեղ կերպով արտայայտել սկսեց 18-րդ դարուց սկսած, երբ Վենետիկում հիմնւել էր Մխիթարեան միաբանութիւնը:

Անշուշտ թէ դրանից առաջ և թէ դրանից յետոյ, Եւրոպայի թէ Ասիայի նոր գաղթավայրերում, ինչպէս նոր ջուղայում, Կալկաթայում, Ամստերդամում, Փարիզում և այլն տեղեր էլ իրանց օգտակար աշխատութիւնն ընծայեցին հայ գրքի և տպագրութեան զարգացման գործին, սակայն, անկարելի է անվերապահօրէն շնորհածել

այն խոշոր դերը, որ ունեցան Մխիթարեանները—Վենետիկի և Վեննայի—այս ազգային կուլտուրական մեծ գործում:

Չը նայելով գործ դրւած մեծ ջանքերին, մենք ստիպւած ենք միաժամանակ շեշտել, որ, այնուամենայնիւ հայ գիրքը դեռ ևս հայ ժողովրդական լայն մասանների համար չէր: Ճիշտ է, նա այժմ հարիւրաւոր, մինչև անգամ հազարաւոր օրինակներով էր տպւում, բայց դրանք ժողովրդի համար չէին, այլ այն մտաւորականների, որոնք վիճակի էին ըմբռնելու, հասկանալու այն, այսինքն զընթացը լեզուն:

Եթէ տպագրական գործի վրայ նայում ենք հասարակական օգտակարութեան տեսակէտից, եթէ ընդունում ենք, որ դրանից է կախւած մի ժողովրդի իսկական կուլտուրականութիւնը, ապա ուրեմն, հայ ժողովրդին հարկաւոր էին այնպիսի գրւածքներ, որոնց նա կարգար և և ըմբռնէր, ուրիշ խօսքով դրանք գրւած լինէին իր առօրեայ, գործածական, ուրեմն և՛ իրեն հասկանալի լեզուով:

Անշուշտ այդ խիստ կարևոր պահանջն էլ մի օր ստանալու էր իր դրական յուժումը:

Եւ 19-րդ դարը հանդիսացաւ հայ ժողովրդի զարգացման երրորդ էտապը—չրժանր: Ու այդ ժամանակ, երբ Ռուսահայաստանը, նրա ներքին պայմանները ծնեցին անմահ Խ. Աբովեանը, որը եղաւ ռուսահայ աշխարհաբարի հիմնադիրը: Միաժամանակ և տաճկահայերն էին ընդգրկել ու փարել աշխարհաբար լեզւին:

Հայութեան երկու հատւածները, 19-րդ դարու կէսից յետոյ մանաւանդ, կուռ շարքերով նետւեցին աշխարհաբարի գիրկը և ահա իրար ետեից տպագրւեցին հայ ժողովրդին հասկանալի լեզուով բազմաթիւ գրքեր ու թերթեր:

Չուզրնթացաբար բացւեցին նաև բազմաթիւ ուսումնարաններ, ուր հետզհետէ աշխարհաբար լեզուն յաղթող

հանդիսանալով հայ տպագրութեան գործին աւելի ու աւելի զարկ տւեց:

Այսօր, հայ ժողովուրդը, առանց դասակարգային խտրութեան, այլևս անմասն չէ համաշխարհային կուլտուրային. նա իր տրամադրութեան տակ ունի և՛ աշխարհաբար գողտրիկ լեզուն, և՛ բազմաթիւ տպարաններ, որոնք կարող են մատակարարել լիառատ կերպով գրքեր՝ հայ մտքին ու հոգուն միանգամայն բաւարարութիւն տալու:

Այսօր իրաւամբ կարելի է ասել, որ հայ ժողովուրդը, շնորհիւ հայ տպագրական գործի զարգացման, կուլտուրական աշխարհի մէջ բռնած ունի մի համեստ անկիւն:

Եւ երբ ասում ենք հայ գրի ու հայ տպագրութեան տօներ, դրանց մէջ մենք գտնում ենք հայ կուլտուրական տօնը: Եւ ահա դա է, որ մեզ ոգևորել է ու պիտի ոգևորէ:

Որքան շատ ու բազմատեսակ ու բազմաբովանդակ լինեն հայ տպարաններից դուրս եկած գրւածքները, այնքան էլ նշանակոււմ է հայ ժողովուրդը յառաջագիմում է:

Բայց որովհետև զիրք կարգալու համար նախ հարկաւոր է կարդալ իմանալ և կարդացածը լաւագոյն կերպով ըմբռնել, ուստի ներկայիս հայութեան պարտականութիւնն է ստեղծել հնարաւորութիւն ուսումը բոլոր հայ ժողովրդի զաւակների համար պարտադիր դարձնել: Դպրոց. ահա առաջին լողունգը: Գի՞րք, ահա նրան յաջորդող լողունգը:

Ուսուցչական Միութիւնը, որպէս և հայ ուսուցչութիւնը, անշուշտ իր սրտին շատ մօտ ընդունելով այս յորելեանները, չը խնայեցին ու չպիտի խնայեն իրանց ջանքերը հայ գրի ու տպագրութեան զարգացման համար, պատրաստելով մանուկ սերնդին՝ իբր ասպագայի ընթերցող հասարակութիւն:

Նւիրւենք, ընկերներ, մեր սիրած ու փայփայած

դարոցին, չը խնայենք մեր փոքրիկ ոյժերը այն ժողովրդի համար, որը դառն ճակատագրի բերմունքով տառապանքի ծովերումն լողացել և մի կերպ հասել է ներկայ օրերիս: Օգնենք, ընկերներ, մտքով ու սրտով մեր մանուկ սերնդին, պատրաստելու նրանից լաւ մարդը, ազնիւ քաղաքացին:

Մենք ի բոլոր սրտէ ողջունում ենք հայ ժողովրդի կուլտուրական կրկնակի տօները, և ցանկանում իրեն, նոյն այս դժբախտ ժողովրդին, որ օր առաջ իր հանրային կրթական-կուլտուրական գործերի տէրն ու ղեկավարը լինելու վիճակն ունենայ:

Գրիվարդ